ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 333-Ա
« 07» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 34-րդ կետերի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայտարարել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

1) Հրապարակել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթներ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարության հրապարակումն և մրցույթի անցկացման ընթացակարգը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024թ. հոկտեմբերի 7-ի
N 333-Ա որոշման

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթների հրապարակման ենթակա Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
2" «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ: